եւս մի բոպէ հանգստութիւն չգտաւ։ Դեռ նոր էր առել Սուլթան Մէհէմմէտ Կ.Պոլիսը՝ եւ ահա Հայաստանի սահմաններում գլուխ բարձրացրին երկու հզօր Ամիրաներ։ Առաջինը կոչւում էր Ջհանշահ, որ տիրապետել էր ամբողջ Պարսկահայքին — Ատրպատական աշխարհին եւ Կորճէքին, Սիւնեաց, Արցախի, Արարատի եւ Վասպուրականի երկրներին, եւ իր համար մայրաքաղաք էր շինել Թավրէզ քաղաքը. իսկ իր որդի Հասան-Ալուն փոխանորդ էր կարգել Նախիջեւան քաղաքում։ Հետզհետէ ընդարձակելով իր իշխանութիւնը, Ջհանշահ արշաւեց եւ Պարսկաստան կամ Իրաղ-Աճեմը, առաւ Շիրազ, Քիրման եւ վերջապէս Սպահան մայրաքաղաքը, անցաւ Խորասան, գրաւեց մինչեւ անգամ Սամարգանդ, նուաճեց այնտեղի Թաթարներին կամ Թուրքմէններին եւ իրեն Պարսկաստանի թագաւոր հռչակելով, դարձաւ իր մայրաքաղաքը Թավրէզ։ Երկրորդ ամիրան էր Ջհանգիր սուլթան, որ տիրում էր Միջագետի եւ Փոքր Ասիայի վրայ եւ նստում էր Դիարբէքիր քաղաքում։ Այսպիսով ամբողջ Հայաստանը գտնւում էր այդ երկու ամիրաների կամ Օսմանցիների եւ Պարսից բռնակալութեան ներքոյ. եւ որովհետեւ այդ երկու պետութիւններն անդադար միմեանց հետ կռւում էին եւ փոփոխակի յաղթող կամ յաղթեալ հանդիսանում, ուստի եւ թշուառ Հայաստանը մերթ ընկնում էր Օսմանցիների, մերթ Պարսից ձեռքն եւ շարունակ հեծում ու տառապում էր, երկու կր-